Դ· ԱԻՐԵՐԳԵՐ

1. ԲԱՐԱԿ ՍԵՋՔ ՈՒ ԹՈՒԼ ԳՈՏԻ

Հա՜յ, լուսնակ վըր դետընքին,
Շաֆղ իս տվի էրկընքին,
Սերսուփ սադաֆ իս վառի,
Լուս քըզնի՛ց է լուս առի։
Բարակ մեջք ու թուլ գոտի,
Հար ե՞ր կանիս դու յոդի։

Շարիշար ղրլֆ ու կոճակ,
Սիվտակ սուն՝ ուև պատի տակ,
Արծըթե բուրջ՝ վըր հողին,
Մեռնի՜մ քու ստեղծողին։
Բարակ մեջք ու թուլ գոտի,
Հար ե՞ր կանիս դու յոդի։

Ա՛ղջի, քու անուն Նարգիզ,
Յա՛ մեռցու, յա՛ սիրե դիս,
Ջուն ու կրակ իս մաղի,
Ընձի ստղ-սաղ իս թաղի։
Բարակ մեջք ու թուլ գոտի,
Հար ե՞ր կանիս դու յոդի։

2. ԲԼԲՈՒԼ ՆՍՏԵՐ

Բլբուլ նստեր վըր քարուն,
Կանչեր զաշուն ու զարուն,
Աշուն օր դառներ դարուն՝
Ճամպենք խաբար մե յարուն.
Ջուր ե՞ր իշկիմ էրերուն՝
Բանձըր-բանձըր սարերուն,
Խորունդ-խորունդ ձորերուն,
Ցելման-յելման գետերուն,
Անտակ-անտակ ծովերուն,
Բարակ-բարակ հովերուն.
Ճամպե մանտըր բալնըքներ՝
Բանանք ղօսկե դռնըկներ։

3. ԴԻԼԲԱՐ, ԽՈՐՈՏԻԿ

Դի՛լբար, խորոտիկ, խորոտիկ,
Բոբիկ մը՛ քնե, խորոտիկ,
Փուշ չքվի տոտիկ, խորոտիկ,
Իմ սրտի մոտիկ, խորոտիկ։
Էրթանք ի արտեր, խորոտիկ,
Շատ ին իմ դարդեր, խորոտիկ,
Էրթանք ի մարագ, խորոտիկ,
Ուտինք մեղր-կարագ, խորոտիկ,
Դի՛լբար, թուխ ծամով, խորոտիկ,
Պագիկդ է համով, խորոտիկ։

4. ԳԻՇԵՐՍԻ ԵՍ ԴՈՒՍ ՅԵԼԵՐ

Գիշերսի ես դուս յելեր՝
Թուխ ամպն անու՜շ կը ցոլեր.
Կը ցոլեր Բազմա սարին,
Շատ բարև անուշ յարին.
Իմ յարն էր բաղչեն ի քուն,
Բուրսայի բարձեր գլխուն,
Կղա, թե պագիկ մ՚ առնիմ՝
Գլորա ծոցիկն յընկա.
Էն ծոցիկն ի՜նչ անման՝
Մեջ վարդ էր, բոլոր ռեհան,
Էն ծոցիկն ի՜նչ էր, ի՜նչ բախտ,
Էն ծոցիկն՝ անուշ դրախտ։

5. ՋԻՍ ՀԱՍՈՒՑԻՐ

Ջիս հասուցիր էս հալուն,
Ջիս քոռցուցիր մըջ լալուն.
Ես քու սիրուն հմալ իմ,
Ինչ մեղբեմոմ դեմ դոլուն։

6. ԹՈՒԽ ԱՉՔԵՐ ՈՒ ՊՉՏԻԿ ԲԵՐԱՆ

Թուխ աչքեր ու պզտիկ բերան,
Քու տանողի տնիկ վերան։

Արի էրթանք սարնի Բինդոլ,
Ես էղնիմ ձուկ, դու էղնիս գոլ։

Արի էրթանք արանի բլուր,
Ես էղնիմ հող, դու էղնիս ջուր։

Արի էրթանք ի վերին թաղ,
Ես էղնիմ թուփ, դու էղնիս շաղ։

Թուփ սչքեր ու սլղտիկ լեռան,
Քու տանողի տնիկ վերան։

7. ԻՄ ՅԱՐՆ ՅԻՋԱՎ

Իմ յարն յիջավ ի էգին,
Օսկեկոթ դանակն ի ձեռին,
Քաղեց սնջերի հաղող,
Դրեց ի օսկե սինին՝
Ճամպեր ուր իարիբ յարին։
Ձեռ ու ոտք մրջ կարմիր հինին՝
Էն լալ է՝ ի օսկե սինին.
Ջավահիր, ջուհար, մարգարիտ,
Վառման վարդ՝ ի կանանչ թփին.
Վարդենիս՝ ի մեջ աշխարին։

8. ԽՈ՛ՐՈՏ, ՔՈՒ ԴԱՐԴԵ՞Ն

Դու նման իս քաղցրիկ մեղու,
Պադիկ մե տու՝ տանիմ դեղու,
Աչք իմ տնկի հեռու տեղու,—
Խո՛րոտ, քու դարդե՞ն, քու դարդե՞ն։

Տնեն ելի, կաներ իս դուռ,
Սիվտակ ծոցիդ մեջ էրկու նուռ,
Դառձեր իմ ես սավդալու ծուռ,—
Խո՛րոտ, քու դարդե՞ն, քու դարդե՞ն։

Գիշեր՝ լուսնակ, ցերեկն՝ արև,
Հեյրան իմ քու դնչից վերև,
Կր դողում քընց աշնան տերև,—
Խո՛րոտ, քու դարդե՞ն, քու դարդե՞ն։

Դու մըջ գեղին՝ ղոզնի շիշակ,
Քու տանողի տուն բրիշակ,
Ցիգամ ձեր տուն՝ դառնամ մշակ,—
Խո՛րոտ, քու դարդե՞ն, քու դարդե՞ն։

9. ԿԸ ՔԵԼԵՐ

Կը քելեր, հա՞յ, կը քելեր,
Մաղերն էր օսկի թելեր,
Երեսն էր լուսնակ բոլոր,
Աչքերն էր բալաք բիլոռ,
Ընքերն էր կամար ու կեռ,
Քթիկն էր սուլթան սիսեռ,
Լեղուն էր բլբուլն ի խուլ,
Թշերն էր խնձորն ի շաղ,
Ակռեքն էր սադաֆ՝ ի շար,
Պակոսնքն էր բարակ ի լար,
Բալեղն էր բարդին ի վելը,
Շորորն էր կաքավ ի քելը,
Կը քելեր, հա՞յ, կը քելեր,
Էն ընձի շա՞տ կը վելեր։

10. ՄՇՈՒ ԽՈՐՈՏԻԿ ԿԱՔՎՈՒԿ

—Մշու խորոտիկ կաքվո՛ւկ,
Յու՞ստի ղիկաս։
—Խասգեղու։
—Բարո՞վ յիդաս խասգեղու,
Ծանոտը քելիս քընց մեղու.
Մանտրիկ տոտերուդ մեռնիմ,
Պագ մե տու՝ տանիմ դեղու։

11. ՅԱՐՈՋ ՏԱՄՊՈՒՐԵՆ

Յիրկըվորե չուրի մկա
Քու տամպուրի ձեն է դիկա.
Պատով յընցա, քար թալեցի,
Քու տամպուրի լար կտրեցի։
Յա՞ռուկ, դու իմ սիրտն իս վառի,
Պադ իմ ուվի, պուգ իմ ստի,
Քու տամպուրին թել իմ ճարի.
Թե մարդ էկավ՝ կը ճամպիմ դա,
Թե հավք էկավ՝ թև կաղիմ դա։

12. ՆԸԽՇՈՒՆ ՄԻՋԱՐՈՎ

Նըխշուն միղարով աղջի՛կ,
Քու դին հաղարով, աղջի՛կ.
Կաներ իս աղբրի ական,
Փելքըդ՝ շող արեղտկան.
Հաղա՞ր էրնեկ քու տիրուն,
Վատվուկ իմ ես քու սիրուն։

13. ՍԻՐՈՒ ԽԱՂ

—Ա՛ղջի, խուրբա՞ն, յիգա՞մ, յիդա՞մ,
—Տղա՛, խուրբան, մի՛դա, մի՛գա։
Մեր հին ճխան կը ճռճռա,
Մեր գիլխեղդ շուն կը գոմոա,
Մեր խուռնաղ ճետ կը կտկտա,
Մեր չար պառվուկ կը մռթմռթա։
—Ձեր հին ճխան կը ճռճռա՝
Սելի սապոն առնիմ, յիդամ.

Ձեր գիւխեղդ շուն կը գոմռա՝
Օշխըրիմ՝ ճուռ առնիմ, յիդամ.
Ձեր խուռնաղ ճետ կը կտկտա՝
Կոտ մե կորեկ առնիմ, յիդամ.
Ձեր չոր պառվուկ կը մոթմոթա,
Դիւու շալ մե տունիմ, յիդամ։
Ա՜յ տոնման ասլի զաղա,
Հոդիս ի բուռ՝ յիդա՜մ, յիդա՜մ։

14. ՏՂՆՆ ՈՒ ԱՂՋԻԿ

—Տո՛, շանորդու շան աղջիկ,
Հեղ մե գոնեն դուս յելի՝
Ձքու բալեղնի տեսնամ։
—Տո՛, շանորդու շան աղա,
Ըսկի էգին չըս գա՞ցի,
Ըսկի բարտի չըս տե՞սի։

—Տո՛, շանորդու շան աղջիկ,
Հեղ մե գոնեն դուս յելի՝
Ձքու յերեսնի տեսնամ։
—Տո՛, շանորդու շան տղա,
Ըսկի Արտմերտ չըս գա՞ցի,
Ըսկի խնձոր չըս տե՞սի։

—Տո՛, շանորդու շան աղջիկ,
Հեղ մե գոնեն դուս յելի՝
Ձքու ճակատն ի տեսնամ։
—Տո՛, շանորդու շան տղա,
Ըսկի Ռավեն չըս գա՞ցի,
Ըսկի դուրան չըս տե՞սի։

—Տո՛, շանորդու շան աղջիկ,
Հեղ մե գոնեն դուս յելի՝
Ձքու աչքերն ի տեսնամ։
—Տո՛, շանորդու շան աղա,
Ըսկի տաճար չըս գա՞ցի,
Ըսկի կանթեղ չըս տե՞սի։

—Տո՛, շանորդու շան աղջիկ,
Հեղ մե գոնեն դուս յելի՝
Ձքու ընքնեբնի տեսնամ։
—Տո՛, շանորդու շան տղա,
Ըսկի ժամտուն չըս գա՞ցի,
Ըսկի կամար չըս տե՞սի։

—Տո՛, շանորդու շան աղջիկ,
Հեղ մե գոնեն դուս յելի՝
Ձքու յակոբքնի տեսնամ։
—Տո՛, շանորդու շան տղա,
Ըսկի շուկեն չըս գա՞ցի,
Ըսկի բրինձ չըս տե՞սի։

—Տո՛, շանորդու շան աղջիկ,
Հեղ մե գոնեն դուս յելի՝
Ձքու մատնիրնի տեսնամ։
—Տո՛, շանորդու շան տղա,
Ըսկի մատուռ չըս գա՞ցի
Ըսկի մոմշող չըս տե՞սի։

—Տո՛, շանորդու շան աղջիկ,
Հեղ մե գոնեն դուս յելի՝
Ձքու զուգսերնի տեսնամ։
—Տո՛, շանորդու շան տղա,
Ըսկի հարսնիք չըս գա՞ցի,
Ըսկի նորհարս չըս տե՞սի։

15. ՏՈ ԱՂՋԻ՛Կ, ՏՈ ՏՆԱՎԵ՛Ր

Տո աղջի՛կ, երի-վերի,
Նման իս ջուն ու փերի,
Ի՞նչ մամ է քըզի բերի.
Տո աղջի՛կ, տո տնավե՛ր։

Բաժ ու բալեղդի բարակ,
Քու լեզուն մեղրած կարաղ,
Քու հագած՝ թա՛մ բումբարակ.
Տո աղջի՛կ, տո տնավե՛ր։

Շոթղ կիտաս դեմ ամրոցին,
Ծծերդ ի փամփուշ ծոցին,
Կը խաղաս հրտ վզնոցին.
Տո աղջի՛կ, տո տնավե՛ր։

Կաներիս դարգյան ի դուռ,
Քու մեջքն է խանջարի բուռ,
Ձիս էրեր իս վիրու ծուռ.
Տո աղջի՛կ, տո տնավե՛ր։

Քարձորցի Մոսոն գերի՝
Յընգեր կրակն ի կէրի,
Ի՞նչ մամ է քըզի բերի.
Տո աղջի՛կ, տո տնավե՛ր։

16. ՏՈ՛ ՏՂԱ, ՏՂԱ

Տո՛ տղա, տղա, ալ կապով,
Հար ե՞ր յընցնաս իմ յաղով,
Մեկ քելիս ու մեկ աշիս,
Աշիս, զիմ հոգին մաշիս.
Մո՛տ արի, իմ սիրտն ի տես,
Քու սերն ու քու տերն իմ ես,
Էրնե՛կ, քամին մաղեր զիս,
Քու ծոցի մեջ թաղեր զիս։

17. ՏՈ՛, ՏՆԱՎԵՐ

Տո՛, տնավե՜ր,
Դու կաներ իս դեմ ամրոցին՝
Լուսնակ զարկի սրտանոցին.
Ջուխտակ ջամամ մըջ քու ծոցին,
Տո՛, տնավե՜ր։

Տո՛, տնավե՜ր,
Դու կաներ իս հանդե ձեր դուռ,
Մեջքդի մընի խանջարի բուռ,
Ձիս էրեր իս սավդալու ծուռ,
Տո՛, տնավե՜ր։

Տո՛, տնավե՜ր,
Դու կաներ իս դիմաց-դիմաց,
Աչք ու ընքով կենիս իմաց,
Պագիկ մե տու, հայես գնաց,
Տո՛, տնավե՜ր։

Տո՛, տնավե՜ր,
Քու խալանն է հազար-հազար,
Արի փախնինք, ելնանք ի սար,
Ձիրար առնինք՝ մտնանք հիսար,
Տո՛, տնավե՜ր։

18. ՔԵԼԵ՛

Քե՛լե, քե՛լե, քելքով աղջիկ,
Արևու պես փելքով աղջիկ,
Դու օր ընձի սիրեր սրտանց՝
Չկէր քըղնե խելքով աղջիկ։

19. ԽՔԸՁԻ ՏԵՍԱ

Քըզի տեսա՝ զիկեր արտեն,
Սիրտսի զարկի սիրու սավդեն,
Փակվեր է իմ մաղա-մաղդեն,
Շորորա՛, Սի՛նամ, շորորա՛։

Քու շորն ու բաժն ին բարեբար,
Յորի՞ն չըս իտա մեկ խաբար,
Ձիսի էրեր իս ղարբեդար,
Շորորա՛, Սի՛նամ, շորորա՛։

Ձիսի թալեր իս մութ զնդան,
Քընց հողի կոշտ՝ սելի գնդան,
Դու իմ աչից՝ վարդ իս խանդան,
Շորորա՛, Սի՛նամ, շորորա՛։

Ցիրկուն ձեր տան ճրագն էր վառ,
Կը նմանիս դու զոզնի գառ,
Ձէն գոթուն թո՛ղ, ադի զիս առ,
Շորորա՛, Սի՛նամ, շորորա՛։

Ջուրն է փրցի՝ դիկտ սարեն,
Սարեն, ձորեն, իմ աչքերեն,
Ձիս առ՝ սաղնա սրտիս յարեն,
Շորորա՛, Սի՛նամ, շորորա՛։

20. Օ՜Յ, Օ՜Յ, Օ՜Յ, Օ՜Յ, ՍԻՆԱՄ, Օ՜Յ

Մեկ կը քելիս, մեկ կը կանիս,
Քու ախպըրտոց հաց կը տանիս,
Աչքով-ընքով մարդ կը սպանիս.
Օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, Սինամ, օ՜յ։

Արև առի ելեջնա բերդին,
Քու սերն ընկի մըջ իմ լերդին,
Քըզի սիրիմ՝ թըղ զիս քերթին.
Օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, Սինամ, օ՜յ։

Արտ հրտ արտին քոշա-քոշա,
Քու աչքերն ին բիլոռ շուշա,
Ես քու սիրուց հալա-մաշա.
Օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, Սինամ, օ՜յ։

Ա՛ղջի, քուռկիկ ձին իմ հեծի,
Ձեր տան դռան իմ մոտեցի,
Դու ե՞ր պտի առնիս ընձի.
Օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, Սինամ, օ՜յ։

Ձեր կալի մեջ՝ որա-որա,
Քըզի տեսա՝ թեավորա,
Ձեն չը տվիր՝ սեավորա.
Օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, Սինամ, օ՜յ։

8—724